

կորդին. նովին իսկ շղթայիւք իւրոց գերելոցն սաստկագոյնս այսպէս ձաղեալ եւ թշնամանեալ գնա՝ քան եթէ յաղթեալ էր զինուքն: Մնայր թերեւս եւ ելից պաշարման եւ առման Տամիադայ, յետ որոյ հարկաւ ցրուէին Խաչակիրքն, եւ մարթ էր նմա կոչել՝ իթիկունս զհաւատարիմ ձիաւորսն. այլ ընդերկարեաց յոյժ այն պաշարումն, եւ ոչ ժամանեաց Լեւոն լսել զլուր առման քաղաքին. եւ զի զգայր օր աւուր զնուագել զօրութեան մարմնոյն, զիջաւ վսեմաբար՝ յետ վեշտասան ամսոց գերութեան պարոնայցն՝ խնդրել եւ թափել զնոսա. նոցա իսկ թողեալ՝ վերաստանալ յապա ժամանակի զոր՝ իփրկանս նոցին տայր՝ իսուլտանն, զամուրն Լուլուայ եւ զանձաւաբերդն Լաւգատի՝ ի Գետահովտին Իսաւրիոյ²³¹, ոչինչ խնայեալ՝ իկարեւոր ամրութիւնս տեղեացն. զի, որպէս խորհրդածէ որդի գերելոյն եւ յաջորդ՝ Գունդստապլն պատմիչ, «Լաւ է թագաւորի աղէկ ճորտ պահել՝ քան զայլ հարստութիւն». եւ յայտնի արար ասէ՝ զլուխ գերութեանն (հայր իւր) զլաւութիւնն. զի «յետ մահուան թագաւորին Լեւոնի արար իւր փոխարէն Կոստանդին գունդստապլն՝ հարիւրապատիկ եւ իւր դստերն», Զապելի: Արձակումն գերելոցն եղել՝ իսկիզբն 1219 ամի, սակաւ ամսօք յառաջ քան զվախճան կենաց Լեւոնի:

Դ. Ռուբէն մերժեալ յԱնտիոքայ, մերժի եւ յերեսաց Լեւոնի

Բայց մնայր սմա եւ՝ ինշխարեալ աւուրս կենացն՝ միանգամ եւս հաւաստել զստուգութիւն զաղփաղփուն բաստից աշխարհի, զոր հանդերձեալ էր՝ իմօտոյ ամենեւին անպատրուակ տեսանել: Նախ, Յովհաննէս կաթողիկոս՝ որ այնքան մեծաւ խնամով եւ բազում ծախութ, եւ սրբազան սպասուց սպառմամբ՝ շինեալ, նորոգեալ եւ ամրացուցեալ էր զՀռոմկլայն, (որ եւ յետ այնր աւելի քան զեօթանասուն ամ նիստ եղել կաթողիկոսաց), որով երբեմն թուէր ընդդէմ Լեւոնի իսկ կալ եւ ժուժկալել, այժմիկ անյոյս լեալ՝ իկարելոյ պահել զայն՝ յերեսաց այլազգեացն որք սպառնային եւ նեղէին զնա, եկն ապաւինեցաւ առ նոյն Լեւոն, եթող՝ ինա զհոչակաւոր զայն գահ, եւ փոխանակ այնր ընկալաւ յիւր աթոռ,

²³¹ Այսպէս հաւաստեն Պատմիչն արքունի եւ Սմբատ. իսկ յիշատակագիրն վերոյիշեալ՝ ասէ. «Ընդ սակաւ գնդոյ դարձոյց յիշխանսն, եւ սէր երդմամբ եղ ընդ արքային Լեւոնի»: Նուագագոյն եւս Վահրամ.

«
Ընդ արքայի երդումն եղեալ,
Եւ ըզգերեալսն դարձուցեալ»: